«Հաստատում եմ»

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական

համալսարանի ռեկտոր Ե.Սերոբյան

«13» հունվարի 2023թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Մարինա Աշոտի Քոչարյանի «Խաղային մեթոդների արդիականացումը պրոբլեմային ուսուցման գործընթացում ռուսաց լեզվի դասերին դպրոցում» վերնագրով ԺԳ 00.02-«Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» /ռուսաց լեզու/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Արդի շրջանում, երբ խիստ կենսունակ են դառնում օտար լեզուների դասավանդման գործընթացում նորագույն տեխնոլոգիաների կիրառումը, սույն ատենախոսությունը ձեռք է բերում նորովի հնչեղություն, քանի որ ներկայացնում է մի ամբողջական համակարգված մոտեցում միջին օղակում ռուսաց լեզվի ժամերին կիրառվող մեթոդաբանության հարցում:

Չնայած գիտական գրականությունը հարուստ է խաղերի վերաբերյալ գրականությամբ, որ խորապես ու բազմակողմանի քննության է առնվել ատենախոսի կողմից, սակայն նրա կողմից առաջարկվում է համալիր քննություն, որ մի կողմից խարսխվում է մոտիվացիա-իրադրություն հակադրամիասնության վրա, և մյուս կողմից համալրվում հոգեբանական, սոցիալ - մշակութային, ճանաչողական գործոններով: Եվ այս ամենը արհեստավարժ կերպով կերտվում է մեկ համակարգում, որի առանցքում հայկական դպրոցների միջին օղակում ռուսաց լեզվի դասավանդումն է խաղերի օգնությամբ՝ համակցված պրոբլեմային ուսուցմամբ: Այս մոդելն էլ դառնում է հետազոտության հիմնական օբյեկտը:

Հստակորեն տարորոշված է աշխատանքի նպատակը, խնդիրները, ուրվագծված է վարկածը: Կանխատեսվում էր, որ առաջադրված խնդիրների տրամաբանությունը կհանգեցներ հաղորդակցական կարողությունների զարգացմանը և կբարձրացներ աշակերտների ռուսաց լեզու սովորելու մոտիվացիան: Անմիջապես ասենք, որ հեղինակին հաջողվել է այն, որի մասին են վկայում շարադրանքի տրամաբանական կուռ կառուցվածքը, փորձարկման տվյալների հուսալիությունը: Անվիճելի է նաև հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը: Առաջարկվող մեթոդների համակցումը հետագայում կարող է ծառայել որպես մեթոդական ուղեցույց՝ հայախոս դպրոցներում ռուսաց լեզու դասավանդելիս:

Աներկբայելի ճշմարտություն է հեղինակի այն պնդումը, որ այս փոխակերպումների ճիշտ կազմակերպումը միտված է հաղորդակցական հմտությունների ձեռքբերմանը, ուստիև աշխատանքում առաջարկվում է միկրո և մակրո պրոբլեմների խաչաձևումները:

Կարևորվում է նաև խաղերի փոխակերպումային մոտեցումը, որ օգնում է միջհաղորդակցական, միջանձնային հարաբերությունների ճիշտ ձևավորմանը:

Ռուսաց լեզվի միջին օղակի դասագրքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է դրանք հավելել լրացուցիչ նյութերով, մասնավորապես խաղային- պրոբլեմային սցենարներով:

Աշխատանքը բաղկացած է երեք գլխից, ներածությունից, եզրակացությունից: Գլուխ առաջինը, իր մեջ ներառող երեք ենթագլուխներով, անդրադարձ է անում պրոբլեմային ուսուցման հոգեբանա-մանկավարժական հենքին, ինչպես նաև որոշարկում է «խաղ» հասկացությը և տարաբնույթ խաղերի ինտեգրված մոտեցման կարևորությունը դպրոցի միջին օղակում ռուսաց լեզվի դասավանդման ժամերին: Շարադրանքի տրամաբանության հաջորդ քայլում ուսումնասիրության դաշտ են մտնում այն մեթոդները, որոնք նպատակամիտված են զարգացնելու աշակերտների հաղորդակցական հմտությունները և դրանց ընտրության հարցում չի անտեսվում հաղորդակցության հոգեբանական, տարիքային առանձնահատկությունները: Գլուխ երկուսը լուսաբանում է խաղերի կիրառության տեխնոլոգիան պրոբլեմային ուսուցման ժամանակ, և դրանց արդյունավետ առկայացման պայմանները հինգից իններորդ դասարանների ռուսաց լեզվի դասագրքերի նյութի հիման վրա: Չեն անտեսվում նաև խաղերի ընտրության սկզբունքները, մասնակիորեն դրանց արհեստավարժ փոխանցումները ինտեգրման գործընթացում:

Աշխատանքի առավել հաջողված մասերից է Գլուխ երեքը, որի սահմաններում խաղային հնարները ինտեգրվում են պրոբլեմայինին՝ ռուսաց լեզվի դասավանդման գործընթացում 5-9-րդ դասարաններում: Նման ինտեգրումը նպաստում է ինչպես հաղորդակցական, այնպես էլ միջառարկայական կոմպիտենցիաների զարգացմանը: Սույն նպատակի համար առաջարկվում են խոսքային գործունեության տարբեր տեսակների գնահատման չափանիշներ: Այս նպատակը համահունչ է նաև ատենախոսի կողմից մշակված և առաջադրված խոսքային ու պրոբլեմային բնույթի վարժությունների համակարգին, որի հիմքում ընկած է XXI դարի աշակերտի տարիքային ու հոգեբանական առանձնահատկությունների նկարագիրը:

Եզրահանգումները համոզիչ են, տպավորիչ է նաև տպագրված հոդվածների քանակը, որոնց շրջանակներում լուսաբանվում են աշխատանքի հիմնական դրույթները: Խոսուն են նաև աշխատանքի վերջում ներկայացված հավելվածները:

Այս ամենով հանդերձ, աշխատանքն էլ ավելի լավ տեսնելու ցանկությամբ, կուզենայինք անել մի քանի դիտարկումներ .

1. Մեզ մոտ մտայնություն է առաջ բերում , թե արդյոք իրատեսական է դասի թեկուզ քառասուն րոպեի ընթացքում հայոխոս լսարանի համար կազմակերպել խաղերի առաջարկվող համակցում՝ նույնիսկ նյութի ծավալայնության նվազման և խմբերի մեծացման ճանապարհով/Ատ. էջ 111/:

2. Չնայած, որ աշխատանքի էջ 119-ում տարանջատված են 5,6,7 և 8,9 դասարանները իրենց հոգեբանամանկավարժական առանձնահատկություններով և դրանց տրամադրված պետական չափորոշիչներով, սակայն բացակայում են այս դասարանների համար առանձնակիորեն նախատեսված խաղերի ինտեգրման բանաձևումները:

3. Գիտափորձի հետազոտական մասը ներկայացված է, բայց և բացակայում է փորձարկման իրականացման ողջ գործընթացը, որն էլ կասկածի տակ է դնում հետազոտության որոշ արդյունքներ:

4.Աշխատանքում խոսվում է գնահատման տարբեր ձևերի մասին, բայց և բացակայում է դրա սանդղակը: Մեզ համար տարակուսանքի առարկա է դառնում, թե ինչ տվյալների հիման վրա են ներկայացված առաջադիմության տոկոսային հարաբերությունները / Ատ. էջ 149-151/:

5. Ինչպես ցանկացած գործ, այս աշխատությունը ևս զերծ չէ տեխնիկական վրիպումներից /էջ 111, 112, 129, 194, 199 և այլն/, սխալներ խաչբառի կաղապարման մեջ / հորիզոնական՝ Սանկտ Պետերբուրգ, այլ ոչ թե Պետերբուրգ, ուղղաձիգ՝ ութի փոխարեն պետք է լինի 9-ը՝ Հռոմ/:

Վերոհիշյալից ակներև է դառնում , որ սույն դիտարկումները բոլորովին էլ չեն նսեմացնում աշխատանքի արժեքը, քանի որ, այն լուրջ երկաձիգ տարիների հետազոտության արդյունք է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մարինա Աշոտի Քոչարյանի «Խաղային մեթոդների արդիականացումը պրոբլեմային ուսուցման գործընթացում ռուսաց լեզվի դասերին դպրոցում» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և իր ԺԳ 00.02- «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» /ռուսաց լեզու/ թվանիշին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկանածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է 2023թ. 13.01 «Օտար լեզուներ և գրականություն» ամբիոնի թիվ 9 նիստում:

Օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ,

Բան.գիտ.դոկտոր, պրոֆեսոր՝ Ա. Հովհաննիսյան

Օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ Ա. Հովհաննիսյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար՝ Կ. Պետրոսյան

13.01.2023թ.